ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/142

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շինանյութի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.05.2021թ.-ի թիվ 26/26-1/8549-2021 գրությամբ «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 24.05.2021թ.-ի թիվ 09/815 գրության հիման վրա, 27.05.2021թ.-ին «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 27.05.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 31.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/142 համարի ծածկագիրը:

04.06.2021թ.-ին և 25.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 04.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.06.2021թ.-ին:

2. **<u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 24.05.2021թ.-ի թիվ 09/815 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով «ԳՀԱՊՁԲ-2021/7-2- ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Ամիրէքս գրուպ» ՍՊ ընկերությունը:

Ս.թ. ապրիլի 23-ի գնահատող հանձնաժողովի թիվ 4 որոշմամբ «Ամիրէքս գրուպ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է N 24, 26, 27, 33, 49, 50, 85, 86, 87-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ մայիսի 4-ին,

ընթացակարգի քարտուղարի կողմից ընտրված մասնակիցն ծանուցվել է ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնի պայմանագրի և որակավորման ապահովումները: 19.05.2021թ. օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, մասնակցին ուղարկվել է ևս մեկ էլեկտրոնային ծանուցում պայմանագրի ստորագրման վերջնաժամկետի հիշեցման մասին, սակայն մասնակցի կողմից պայմանագիրը չի ստորագրվել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ «Ամիրէքս գրուպ» ՍՊ ընկերության հայտը մերժվում է և մասնակից զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.05.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.05.2021թ.-ի թիվ 26/26-1/8549-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/142 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շինանյութի ձեռքբերման նպատակով 26.03.2021թ.-ին հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 24-րդ, 26-րդ, 27-րդ, 33-րդ, 49-րդ, 50-րդ, 85-րդ, 86-րդ և 87-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ն:

v. 26.04.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր:

vi. Պատվիրատուն 04.05.2021թ.-ին, Մասնակցի amirexgroup@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնելով «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ մասնակցի հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կկնքվի պայմանագիր, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու դեպքում:

vii. Պատվիրատուն 19.05.2021թ.-ին Մասնակցի էլ. փոստի հասցեին է ուղարկել պայմանագիր ստորագրելու վերջնաժամկետի մասին ծանուցում և հայտնել է, որ «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ն հանդիսանում է «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից, ուստի պայմանագիր կնքկու մասին ծանուցումը և պայմանագրի

նաիւագիծն սաանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում իրավասու է ստորագրել պայմանագիրը: Հետևապես կազմակերպությունը պայմանագրի նախագիծն ստանալու օրվանից սկսած համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի ունի 10 աշխատանքային օր պայմանագիրը ստորագրելու համար 04.05.2021-19.05.2021թ.: Եթե մինչև նշված ժամկետի ավարտը չի ստորագվրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացվում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

viii. Հանձնաժողովի 20.05.2021թ.-ի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ համաձայն ս.թ. ապրիլի 23-ի գնահատող հանձնաժողովի թիվ 4 որոշման «Ամիրէքս գրուպ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է N 24, 26, 27, 33, 49, 50, 85, 86, 87-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-դ հողվածի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող օրը, ընթացակարգի քարտուղարի կողմից ընտրված մասնակիցն ծանուցվել է ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հողվածի 3-րդ կետի համաձայն, ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնի պայմանագրի և որակավորման ապահովումները: 19.05.2021թ.-ին օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, մասնակցին ուղարկվել է ես մեկ էլեկարոնային ծանուցում պայմանագրի ստորագրման վերջնաժամկետի հիշեցման մասին, սակայն մասնակցի կողմից պայմանագիրը չի ստորագրվել, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հողվածի 3-րդ կետը, «Ամիրէքս գրուպ» ՍՊ ընկերության հայտը մերժվել է և վերջինս որպես ընտրված մասնակից գրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.05.2021թ.-ի թիվ 26/26-1/8549-2021 գրությամբ «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին

հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից շինանյութի ձեռքբերման նպատակով 26.03.2021թ.-ին հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ 24-րդ, 26-րդ, 27-րդ, 33-րդ, 49-րդ, 50-րդ, 85-րդ, 86-րդ և 87-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված 26.04.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր, որից հետո Պատվիրատուն 04.05.2021թ.-ին, Մասնակցի amirexgroup@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնելով «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ մասնակցի հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կկնքվի պայմանագիր, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու դեպքում: Բացի այդ՝ Պատվիրատուն 19.05.2021թ.-ին Մասնակցի էլ. փոստի հասցեին է ուղարկել պայմանագիր ստորագրելու վերջնաժամկետի մասին ծանուցում և հայտնել է, որ

«Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ն հանդիսանում է «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից, ուստի պայմանագիր կնքկու մասին ծանուցումը և պայմանագրի նաիւագիծն սաանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում իրավասու է ստորագրել պայմանագիրը: Հետևապես կազմակերպությունը պայմանագրի նախագիծն ստանալու օրվանից սկսած համաձայն՝ «Գնուսների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի ունի 10 աշխատանքային օր պայմանագիրը ստորագրելու համար 04.05.2021-19.05.2021թ.: Եթե մինչև նշված ժամկետի ավարտը չի ստորագվրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացվում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Սակայն Հանձնաժողովի 20.05.2021թ.-ի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ համաձայն ս.թ. ապրիլի 23-ի գնահատող հանձնաժողովի թիվ 4 որոշման «Ամիրէքս գրուպ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է N 24, 26, 27, 33, 49, 50, 85, 86, 87-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-դ հողվածի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող օրը, ընթացակարգի քարտուղարի կողմից ընտրված մասնակիցն ծանուցվել է ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հողվածի 3-րդ կետի համաձայն, ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնի պայմանագրի և որակավորման ապահովումները: 19.05.2021թ.-ին օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, մասնակցին ուղարկվել է ես մեկ էլեկարոնային ծանուցում պայմանագրի ստորագրման վերջնաժամկետի հիշեցման մասին, սակայն մասնակցի կողմից պայմանագիրը չի ստորագրվել, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հողվածի 3-րդ կետը, «Ամիրէքս գրուպ» ՍՊ ընկերության հայտը մերժվել է և վերջինս որպես ընտրված մասնակից գրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.05.2021թ.-ի թիվ 26/26-1/8549-2021 գրությամբ «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/142 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ամիրէքս գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**